ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.11.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/157

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.10.2018թ. թիվ 01.1/26-3/18830-18 գրությամբ «ԱՆՆԱ-80» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) 09.10.2018թ. թիվ 1/18-2/59739-18 գրության հիման վրա, 18.10.2018թ. թիվ 01.1/26-3/18830-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «ԱՆՆԱ-80» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ԱՆՆԱ-80» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ԱՆՆԱ-80» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 03.11.2018թ. ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««ԱՆՆԱ-80» ՍՊԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև 05.04.2018 թ. կնքվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/30» ծածկագրով պայմանագիր, որի շրջանակներում Ընկերությունը պետք է կատարեր Էրեբունի վարչական շրջանի թվով երեք բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքներ:

Աշխատանքների կատարման ժամանակ խաթարվել էր աշխատանքների բնականոն ընթացքը Հանրապետությունում տեղի ունեցած թավշյա հեղափոխության, ինչպես նաև Ավանեսով 1 բակային տարածքում 4 բնակիչների կողմից աճեցրած մրգատու ծառերի և տեղում կառուցած տնակների պատճառով, որոնք տեղակայված են նախագծով նախատեսված հիմնանորոգվող համապատասխան բակային տարածքում: Բնակիչները չէին թողնում նշված վայրում կառուցել խաղահրապարակ՝ պահանջելով վնասի հատուցում: Վերջիններիս բացատրվել է, որ Ընկերությունը իրավասու չէ նրանց պահանջը բավարարելու և որ խնդրին լուծում կարող է տալ թաղապետարանը: Բնակիչները դիմել են թաղապետարան, վերջիններիս պատասխանել են, որ կուսումնասիրեն և հարցին լուծում կտան, սակայն մինչ օրս լուծում չի տրվել, իսկ բնակիչները թույլ չեն տվել Ընկերության աշխատողներին շարունակել աշխատանքները:

Նշված խնդրի հետ կապված Ընկերության կողմից ևս գրություն է գրվել թաղապետարան, սակայն այն դեռևս մնացել է անպատասխան:

Ընկերության կողմից ներկայացվել է 3 խաղահրապարակներում կատարված աշխատանքների կատարողական ակտերը, սակայն թաղապետարանից հայտնել են, որ ֆինանսավորում առայժմ չեն հատկացնում: Այնուհետև Ընկերությունը գրությամբ դիմել է թաղապետարան՝ խնդրելով հիմնանորոգման աշխատանքների պայմանագրով նախատեսված ժամկետը մեկ ամսով՝ մինչև օգոստոսի 31-ը երկարացնեն, վերը նշված պատճառներից ելնելով: Երկու անգամ գրություններ գրելուց հետո, 30.07.2018թ. գրությամբ պատասխանում են, որ Էրեբունի վարչական շրջանն առարկություն չունի: Սակայն Էրեբունի թաղապետարանի պահանջով 17.08.2018թ. Երևանի

քաղաքապետարանը միակողմանի լուծել է պայմանագիրը՝ չթույլատրելով շարունակել աշխատանքները, որից հետո թաղապետարանը պահանջել է Ընկերությունից ներկայացնելու կատարված շինմոնտաժային աշխատանքների կատարողական ակտերը: Անմիջապես կազմվել և տեխ-հսկիչների կողմից ստորագրությամբ հաստատված ակտերը ներկայացվել է թաղապետարան, սակայն երկար ժամանակ իրենց մոտ պահելուց հետո ետ է վերադարձվել ակտերը»:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերության տնօրենը խնդրել է չներառել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում քանի է, որ թաղապետարանի ղեկավարության կողմից ոչ մի աջակցություն չի եղել աշխատանքների բնականոն ընթացքն ապահովելու համար, ավելին՝ վերջիններս ցանկանում էին, որ իրենց համայնքում աշխատի իրենց նախընտրած շինարարական ընկերությունը, այլ ոչ թե՝ մեկ ուրիշը:

«ԱՆՆԱ-80» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/157 ընթացակարգի շրջանակներում 23.10.2018թ. ժամը 11:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը, իսկ 05.11.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստին տնօրենը ապահովելով իր ներկայությունը հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 09.10.2018թ. թիվ 01/61-21719 գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և «ԱՆՆԱ-80» ՍՊԸ-ի միջև 05.04.2018թ. կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/30» ծածկագրով աշխատանքների գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Էրեբունի

վարչական շրջանի թվով երեք բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար»:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ «Պայմանագով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի տեխնիկական բնուագրին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մաս կազմող ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան»:

Պայմանագրի 3.4.1 կետի համաձայն՝ «Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ Տեխնիկական բնութագրին և ծավալաթերթին համապատաոսխան»:

Պատվիրատուն հայտնել է, որ Ընկերության կողմից Պայմանագրով սահմանված ժամկետում չեն կատարվել պայմանագրային պարտավորությունները, չնայած այն հանգամանքին, որ Պայմանագրի 8.15 կետով սահմանված պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնող Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից համապատասխան գրություններով Ընկերությանը տեղեկացվել է սահմանված ժամկետում շինարարական աշխատանքներն իրականացնելու և ավարտելու անհրաժեշտության վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ

որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ Պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան....»:

Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից.»:

Վերոգրյալով պայմանավորված, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերության կողմից Պայմանագրով սահմանված ժամկետում չեն կատարվել ստանձնած պարտավորությունները, Երևանի քաղաքապետարանը ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է Ընկերության հետ կնքված Պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն խնդրել է ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով Ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթները:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի շրջանակներում 23.10.2018թ. ժամը 11:05-ին և 05.11.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ՍՑ-ԱՄ-2018/157 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/157 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի և «ԱՆՆԱ-80» ՍՊԸ-ի միջև 05.04.2018թ. կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/30» ծածկագրով աշխատանքների գնման պայմանագրի համաձայն Ընկերությունը պարտավորվել է կատարել Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի թվով երեք բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքներ:

2. Պայմանագրի 1-ին կետի 1.3 ենթակետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 2018թ. հուլիսի 31-ը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով՝ Հավելված N 2:

3. Պայմանագրի թիվ 2 Հավելվածի՝ օրացուցային գրաֆիկի համաձայն՝ Կապալառուի կողմից կատարվելիք Էրեբունի վարչական շրջանի թվով երեք բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների առանձին տեսակների համար աշխատանքի կատարման սկիզբը համարվում է Պայմանագիրն ուժի

մեջ մտնելու օրը, իսկ որպես ավարտ նշվել է, որ կատարման նախընտրելի ժամկետ է սահմանվում մինչև 31.07.2018թ.:

4. Էրեբունի վարչական շրջանի ղեկավարին ուղղված 24.07.2018թ. և 30.07.2018թ. գրություններով «ԱՆՆԱ-80» ՍՊԸ-ն հայտնել է, որ 2018թ. ապրիլից մինչ այսօր բակային տարածքների շինաշխատանքների հիմնանորոգման բնականոն ընթացքը խաթարվել է տեխնիկական, ֆինանսական և այդ օրերին Հանրապետությունում տեղի ունեցած թավշյա հեղափոխության հետևանքով: Ընկերությունը խնդրել է հաշվի առնել նշվածը և մեկ ամսով՝ մինչև օգոստոսի 31-ը երկարացնել աշխատանքների կատարման ժամկետը:

5. Էրեբունի վարչական շրջանն Երևանի քաղաքապետարանին ուղղված 31.07.2018թ. թիվ 24/1-10/17286ել գրությամբ հայտնել է, որ «ԱՆՆԱ-80» ՍՊԸ-ի տնօրենը դիմել է Երևանի վարչական շրջանի ղեկավարին Էրեբունի վարչական շրջանի թվով երեք բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների կատարման ժամկետը մեկ ամսով երկարացնելու համար:

Վերոհիշյալ գրությամբ Էրեբունի վարչական շրջանը խնդրել է Երևանի քաղաքապետարանին Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման ժամկետը երկարացնել մինչև 2018 թվականի օգոստոսի 30-ը, նշելով որ աշխատանքների կատարման ժամկետի փոփոխությունը չի խոչընդոտում վարչական շրջանի կողմից իրականացվող ծրագրերի կատարմանը:

6. Երևանի քաղաքապետարանը Էրեբունի վարչական շրջանին ուղղված 02.08.2018թ. գրությամբ տեղեկացրել է, որ գրության մեջ նշված հիմքերը բավարար չեն Երևանի քաղաքապետարանի և «ԱՆՆԱ-80» ՍՊԸ-ի միջև 05.04.2018թ. կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/30» ծածկագրով պայմանագրի աշխատանքների կատարման ժամկետը մինչև 2018թ. օգոստոսի 30-ը երկարացնելու համար:

7. Երևանի քաղաքապետարանը Ընկերությանն ուղղված 05.10.2018թ. թիվ 61/1116 գրությամբ միակողմանի հրաժարվել է Ընկերության հետ կնքված Պայմանագրից համապատասխանաբար համարելով այն լուծված, այն հիմքով, որ Ընկերության կողմից Պայմանագրով սահմանված ժամկետում չեն կատարվել ստանձնած պարտավորությունները:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.10.2018թ. թիվ 01.1/26-3/18830-18 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 09.10.2018թ. թիվ 01/61-21719 գրությունը և կից փաստաթղթերը, «ԱՆՆԱ-80» ՍՊԸ-ի 03.11.2018թ. գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Երևանի քաղաքապետարանի և «ԱՆՆԱ-80» ՍՊԸ-ի միջև 05.04.2018թ. կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/30» ծածկագրով աշխատանքների գնման պայմանագրի համաձայն Ընկերությունը պարտավորվել է կատարել Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի թվով երեք բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքներ:

Պայմանագրի 1-ին կետի 1.3 ենթակետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 2018թ. հուլիսի 31-ը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով՝ Հավելված N 2:

Պայմանագրի թիվ 2 Հավելվածի՝ օրացուցային գրաֆիկի համաձայն՝ Կապալառուի կողմից կատարվելիք Էրեբունի վարչական շրջանի թվով երեք բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների առանձին տեսակների համար աշխատանքի կատարման սկիզբ է նախատեսվել Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը, իսկ ավարտը՝ մինչև 31.07.2018թ.:

Էրեբունի վարչական շրջանի ղեկավարին ուղղված 24.07.2018թ. և 30.07.2018թ. գրություններով «ԱՆՆԱ-80» ՍՊԸ-ն հայտնել է, որ բակային տարածքների

հիմնանորոգման աշխատանքների բնականոն ընթացքը խաթարվել է տեխնիկական, ֆինանսական և ապրիլին Հանրապետությունում տեղի ունեցած թավշյա հեղափոխության հետևանքով: Ընկերությունը խնդրել է հաշվի առնել նշվածը և մեկ ամսով՝ մինչև օգոստոսի 31-ը երկարացնել աշխատանքների կատարման ժամկետը:

Էրեբունի վարչական շրջանն Երևանի քաղաքապետարանին ուղղված 31.07.2018թ. թիվ 24/1-10/17286ել գրությամբ հայտնել է, որ «ԱՆՆԱ-80» ՍՊԸ-ի տնօրենը դիմել է Երևանի վարչական շրջանի ղեկավարին Էրեբունի վարչական շրջանի թվով երեք բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների կատարման ժամկետը մեկ ամսով երկարացնելու համար:

Վերոհիշյալ գրությամբ Էրեբունի վարչական շրջանը խնդրել է Երևանի քաղաքապետարանին Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման ժամկետը երկարացնել մինչև 2018 թվականի օգոստոսի 30-ը, նշելով որ աշխատանքների կատարման ժամկետի փոփոխությունը չի խոչընդոտում վարչական շրջանի կողմից իրականացվող ծրագրերի կատարմանը:

Երևանի քաղաքապետարանը Էրեբունի վարչական շրջանին ուղղված 02.08.2018թ. գրությամբ տեղեկացրել է, որ գրության մեջ նշված հիմքերը բավարար չեն Երևանի քաղաքապետարանի և «ԱՆՆԱ-80» ՍՊԸ-ի միջև 05.04.2018թ. կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/30» ծածկագրով պայմանագրի աշխատանքների կատարման ժամկետը մինչև 2018թ. օգոստոսի 30-ը երկարացնելու համար:

Երևանի քաղաքապետարանը Ընկերությանն ուղղված 05.10.2018թ. թիվ 61/1116 գրությամբ միակողմանի հրաժարվել է Ընկերության հետ կնքված Պայմանագրից համապատասխանաբար համարելով այն լուծված:

Այսպիսով՝ Երևանի քաղաքապետարանի և «ԱՆՆԱ-80» ՍՊԸ-ի միջև 05.04.2018թ. կնքված թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/30» պայմանագիրը միակողմանի Պատվիրատուի կողմից լուծվել է Ընկերության կողմից իր պայմանագրային պարտավորությունները չկատարելու հետևանքով: Սակայն ուսումնասիրելով Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետները՝ 05.04.2018թ.-31.07.2018թ., և միևնույն ժամանակ Ընկերության Էրեբունի վարչական շրջանի ղեկավարին ուղղված 24.07.2018թ. և 30.07.2018թ. գրությունները, արձանագրում եմ, որ Ընկերության կողմից Պայմանագրով

նախատեսված հիմնանորոգման աշխատանքների չկատարումը Պայմանագրով նախատեսված ժամկետներում պայմանավորված է եղել տեխնիկական, ֆինանսական և մասնավորապես տվյալ ժամանակահատվածում Հանրապետությունում տեղի ունեցած թավշյա հեղափոխության հետևանքով, որով պայմանավորված Ընկերությունը խնդրել է Պատվիրատուին մեկ ամսով՝ մինչև օգոստոսի 31-ը երկարացնել աշխատանքների կատարման ժամկետը:

Այսպիսով, գտնում եմ, որ նման պայմաններում Ընկերության վարքագիծը չի կարող գնահատվել որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ Ընկերությունը օբյեկտիվորեն զրկված է եղել Պայմանագրով ստանձնած պարտականությունները Պայմանագրով սահմանված ժամկետներում կատարելուց, ուստի պայմանագրային պարավորությունների չկատարումը տվյալ պայմաններում պայմանավորված է եղել Ընկերության կամքից և վարքագծից անկախ հանգամանքներով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.10.2018թ. թիվ 01.1/26-3/18830-18 գրությամբ «ԱՆՆԱ-80» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 06906663) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ